

ՇԱԽՈՒՄ

Ֆրանսիական և իտալական լիբրարությունների համագործակցություն

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна.

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Գին 10 ՍԱՆԹԻՄ

Գին 10 ՍԱՆԹԻՄ

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Թե ինչո՞ւ Պաշխարիս առաքնորդ մը չի ունեւած, Գ. Ա. — Տխոր երեւոյթներ, Վարդո. — Գաղղաղիական Պատերազմը (ֆերթուած), Կալեւ-Արշալիր. — Հայկական Նուագանակները, Շաւաւայ. — Փայլասակների Յիշատակարան (Հասկնալի կոտորածը), Շ. — Գաղղաղիական Գիւղեր (Տիւրքիսիս). — Ազգային. — Թուրքերի մաս :

ԹԷ ԻՆՉՈՒՆ ԳՈՒԼԿԱՐԻԱ

ԱՌԱՋՆՈՐԴ ՄԸ ԶԷ ՌԻՆԵՅԱՍՏ

—)(—

Վարդապետ կը պահուէր :
Այն անշուշտ . որովհետեւ անյիշատակ ժամանակներէ ի վեր զբօսաշրջիկներու անշատ զատակարար մը կը կազմէ այդ արհեստակցութիւնը Պոլսոյ մէջ : Ասոնցմէ ո՞րը չի պիտի ուզէր հրամայել այսպիսի թեմի մը ուր և ո՛չ մէկ վարչական կամ կառավարական գծուարութիւն չպիտի գայ իրմէ քերտ և արեւութիւն խել : Արդեօք ժողովուրդը այդ արամագրութիւնը չունի . գուցէ և այդ անշուշտ իր պատճառը պէտք է որ ունենայ :

Իսկ որովհետեւ Պոլսոյ հայութիւնը այդ խնդրին մէջ ստիպողականութիւն չէ տեսած : Եթէ օրին մէկը փափազի առաջնորդ մը ընտրել , անտարակոյս արժանաւոր եկեղեցական մը պիտի փնտռէ . բայց եկու տես որ զայն գտնելուն պէս , խիղճը չի պիտի թոյլատրէ որ անձնասիրաբար ինքզինքին համար վարդնէ այդ անտաղիտ կրօնաւորը , այլ իբր եղբայրասիրական պարտք , զայն բռնելուն պէս Հայաստան պիտի զրկէ : Վասնզի հոն , այդ սիրելի և տառապող երկրին մէջն է որ առաջնորդական պէտք կայ . հոն՝ արեւան մէջ լողացող , աւերակաց տակ կծկտած մեր հայրենակիցներն են որ ակնդէտ ի դուր կը սպասեն , որպէս զի հասնի այն հովիւր որ փրկարար ցուպով գէթ հեռացնէ վայրագ քայլերու վոհմակները :

Երկրորդ՝ ինչպէս Ռուսներու նոյնպէս ալ Պոլսոյ հայերը մեծ պատճառներ ունին հաւատարմ որ իրականին մէջ գոյութիւն չունենան թերեւ այն անտաղիտ վարդապետները , որոնցմէ ոմանց համբաւը միայն ի լրոյ իմացած են :

Չար գիւղումը թէ ուրիշ պարագաներ այնպէս մը կարգաբաժն են որ Պալատներու շուրջը և Գանուրի հովիտը այցելող վարդապետները , անցեալի մէջ , շատ տխուր տպաւորութիւններ թողած են իրենց անարժէք անձով . այնպէս որ , հեռի մշակայ կենակցութեան մը զազափարը ներշնչելէ ժողովուրդին , բոլորովին հակոտնեայ բառեր բերած են անոնց շրթերուն վրայ :

—Ե՞րբ պիտի ազատինք ուրիշ :

Երկար կըլլայ անուններու շարք մը զետեղել այստեղ : Տարակոյս չկայ թէ պատուաբեր ցանցաւ եկեղեցականներ եւս եկած անցած են այստեղերէն . բայց շատ արագաթուիչ կերպով և հետեւաբար առանց նկատելի հետքեր թողու : Ինչպէ՞ս ուրեմն կուզուի որ Պոլսոյ հայերը և Ռուսներու հայերը հոգի տան առաջնորդ մը ունենալու համար . և ի՞նչ ջանքեր պէտք է ընէ լրագրութիւնը՝ հիմ բռնած այդ յոռի կարծիքը շրջու համար . նա մանաւանդ որ շատ անգամ այս գործը գուցէ գծուար ըլլայ ընել , ձեռքը խղճին տանելով :

Սակայն մեր բաժնեւոր պէտք չէ հետեւցնել թէ սկզբունքով գէ՞մ ենք ընդհ. Առաջնորդութեան մը ստեղծուելուն : Ընդհակառակը , կը կարծենք նոյն իսկ թէ ժամանակը հասած ըլլալու է այդ կարեւոր հարցով զբաղուելու :

Միայն թէ շատ փափուկ գործ մըն է այդ և ծայրայեղ զգուշութեան և շրջահայեցութիւններու կը կարօտի :

Պէտք է ամէն բանէ առաջ լաւ գծել անոր իրաւասութեան սահմանները և զայն պարփակել միմիայն զուտ եկեղեցիի գործերու մէջ , բացարձակապէս արգելելով անոր ուղղակի մասնակցութիւնը նաեւ կրթական գործին : Իսկ դեռ անոր անհատականութիւնը չի կորսուի , անոր անհատականութիւնը չի կորսուի , անոր անհատականութիւնը չի կորսուի :

Ժերու մէջ , բացարձակապէս արգելելով անոր ուղղակի մասնակցութիւնը նաեւ կրթական գործին : Իսկ գալով ապագայ առաջնորդը անսահման ուժերով օժտելու գործին , առկէց աւելի ձախող գաղափար անհնարին է որ ճայթի աշխարհականի մը ուղեղին մէջ :

Միշտ ըսած է թէ ազգ մը մը շտ կը զլլայ երբ իր ճակատագիրը մէկ մարդու կը յանձնէ , նոյն իսկ երբ այդ մարդուն անունը նախնին ըլլայ :

Աւր մնաց վարդապետ մը , որ հարիւրին իննսուն և ինը փառամուր կըլլայ և «բաժանեա՞ զի տիրեսցես» իրեն սկզբունք բռնած , կրնայ ճշմարիտ ճակատամարտներ առաջ բերել թէ՛ ներքնապէս , թէ՛ այլ և այլ քաղաքներու հայերուն մէջ և . . . մնաք բարով առաջընթացութեան երազներ :

Այլ , Պոլսոյ հայերու ընդհանուր պէտք է ըլլայ այն երրորդութիւնը որ չի կրնար ուշանալ ձեռք ձեռքի տալէ , այնպիսի վիթխարի ուժ մը առաջ բերելու համար , որուն քով անշուշտ կը նսեմանայ սեւ վեղարէ մը վարուելու գաղափարը :

Այս երրորդութիւնն է՝ զբաղողը , մամուլը և կորովի ու խոհուն երիտասարդութիւնը :

Գ. Ա.

ՏԻՈՒԻ ԵՐԵՒՆՅՈՒՆԵՐ

—)(—

Ժամանակը արագաբար սահում է . կեանքի պայմանները գծուարանում են . ազրելու եւ անհատական ու մարդկային պարտքերը կիսէ ոչ լիովին գոնէ մասամբ կատարելու համար հարկաւոր են մշակված խելք ու գիտութեան պաշար եւ բարոյական գաստիարակութիւն . ցեղերի եւ ազգերի մէջ գոյութեան կռիւը հասնում է իր գագաթնակէտին . ապրում է իբր մարդ , այլ ոչ իբր անասուն այն անհատը կամ այն ազգը , որ բոլորովին թողել է իր պայքարի կեանքի նախաընդհանրական ձեւը ու ապրում է ժամանակի ոգու եւ պահանջների համաձայն :

Մի խօսքով այժմ կորուսի չը մատնուելու համար հարկաւոր է գիտու-

թեան դրականը իր բոլոր ճիւղերով , բարոյական գաստիարակութիւն , անվախ ձեռներէցութիւն եւ հաստատ կամք կոտորու թէ բնութեան թէ կեանքի խոչնդոսները դէ՞մ եւ թէ մեզնից զօրեղ ցեղերի դէ՞մ , կըռուել թէ ոչ յաղթելու համար , գոնէ զիմանալու , անհատական , ազգային եւ մարդկային իրաւունքները չը կորցնելու եւ պաշտպանելու համար : Մենք գիտենք որ մեր հին սերունդը այդ ծանր խնդիրների մասին շատ էլ չէ գլուխ ցաւեցրել , նա մեծ մասամբ մտածել է իր գոյութիւնը պահպանելու , փորը կշտացնելու եւ շատ շատ եկեղեցին բարեկարգելու համար :

Այսօր ժամանակը շատ է փոխված . գերուկ եպիսկոպոսներն ու վարդապետները , նարեկն ու Սաղմուսը մեզ չեն կարող փրկել սպառնացող կորստից : Մեզ հարկաւոր են զպրոցներ , բառի բուն նշանակութեամբ : Գործներ ուր մանուկ սերունդը գիտութեան հարածների տակ կը սթափվի իր արեւելեան ծուլութիւնից , սոսի տակ կը տայ այն նախապաշարութիւններ , որոնք մինչեւ հիմա կաշկանդված են պահել մեր պայքարի եւ հայրերի մտքերը : Գործներ ուր մեր նոր սերունդը պէտք է սովորի զգովել , հազար մղոններով հեռու փախչել մեր հին շարժիական նեղ հայեացքներից ու ձգտումներից : Գործներ ուր մեր նոր սերունդը պէտք է զարգանայ իբր հայ , իբր մարդ ու լինի կատարի ու անվեհեր զինուոր ոչ միայն իր հացը ձեռք բերելու համար , այլ եւ իր ընդունած եւ պաշտած հանրամարդկային լայն գաղափարները յառաջ մղելու , պաշտպանելու :

Վերջապէս մեր նոր սերունդը ժամանակակից զպրոցում պէտք է սովորէ բառի բուն նշանակութեամբ լինել Գրիստոսի հետեւող եւ նրա ամենամեծ պատէրը «Միբր ընկերովք ինչպէս քո անձը» հայ կեանքի մէջ իրականացնելու համար ամէն ճիւղ թափէ եւ տեսակ տեսակ զոհողութեան պատրաստ լինի :

Այո , զպրոցում եւ միայն զպրոցում հայ նոր սերունդը կարող է սովորել այդ մեծ պատէրը , ըմբռնել եւ նրա զինուորը դառնալ :

Գործերի մորթերը ցոյց տուին որ մարդկութեան ձեւապաշտ , կեղծ , գոհնիկ եւ բթացած ուղեղով հոգեւորականները մոռացան իրանց վարդապետի բուն պատէրը , կամ թէ հասկացան ու կեղծեցին :

զգացմունք ամենալայն տեսակի :
 Մեր դպրոցներում պէտք է պատ-
 րաստվեն լուսաւոր, բարոյական լաւ
 մարդիկ եւ լաւ հայեր, հոգ չէ, թող
 դրանք մինչեւ 17—18 տարեկանը
 չիմանան թէ հացի հողան որչափ է .
 ով առջը հացի վրա է մտածում,
 քան լաւ գործի՜ նա չէ կարող լաւ
 ոգեւորվել ոչ մի մեծ գաղափարով . . .
 հասկացէք, պատանի հայեր ու հայու-
 հիներ . . . նախ ոգեւորվեցէք մեծ,
 մաքուր գործերով . գործերով, որոնք
 օգտակար են հանրութեան, ապա
 մտածեցէք ձեր հացի վրա : Այդպէս
 են եղել Գրիստոս—որը մեր հաւատի
 հիմնաքարն է եւ բոլոր այն մեծ մար-
 դիկ, որոնք իրանց ամբողջ կեանքը
 զոհաբերել ազգային եւ մարդկային
 սեղանի վրա՝ նրանց արդար դատերը
 պաշտպանելու :

Մեր դպրոցները շատ քիչ ու գը-
 րիթէ չեն համապատասխանում այդ
 բոլոր պահանջներին, նոյն խնդիրը
 հաշտութեամբ մի տեսակ ձգտում
 կայ ստեղծելու այնպիսի դպրոցներ,
 որոնց նպատակ է միայն եւ միայն
 գործնական կեանքի համար պատ-
 րաստվելու : Այդպէս չէ. ճիշտ է, ա-
 ռանց հացի չէ կարելի ապրել . սա-
 կայն առանց մտքի եւ խօսքի էլ չէ
 կարելի ապրել : Մենք հայերս շատ
 եւ շատ գործնական ենք եղել, մա-
 նաւանդ վերջին դարերում, չենք
 ունեցել ոչ մի իդէալ, ոչ մի գաղա-
 փար եւ միայն մտածել ենք նիւթա-
 պէս ապահով լինելու . շատ շատ զար-
 դարել ենք եկեղեցիները եւ կերակ-
 րել շատ հաստափոր եւ բթամիտ
 վարդապետներ եւ քահանաների :

Իրա համար էլ լուսաւոր մարդ-
 կութիւնը իր ճակատին դրոշմել է
 երկրորդ հրէա եւ միայն կրօնական
 ժողովուրդ մակդիրը :

Ժամանակ է ոչ չարչի, այլ իդէա-
 լիստ սերունդ պատրաստելու . առանց
 այդ տեսակ սերնդի մենք չենք կա-
 րողանալու հայ ազգի առջեւ դրած
 բարդ խնդիրները լուծել : Այս
 վայրկեանս մենք պէտք ունենք
 կարիքաւորներին, վաշիկթոններին
 եւ Մաճճիհիներին հետեւող հայ սե-
 րունդի . մեր երկսեռ մանուկների
 կրթութեան նպատակը պէտք է լինի
 այդ մարդոց նման տարր հասցնել, ա-
 զատասէր եւ գաղափարական հայ
 մարդ եւ հայ կին :

ՎԱՐԴՕ

ՀԱՅՎԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՀԱՆՂԵԱԾ

—)·(—

Հայկական նուագահանդէսը կա-
 տարեալ յաջողութիւն ունեցաւ :
 Երեքշաբթի գիշերուան նախըն-
 թաց ժամերու փայլակներէն ու յորդ
 անձրեւներէն ետքը, օդի ու երկնքի
 հանդարտութիւն մը, բոլորովին ան-
 սահնակալ, միջոց տուաւ գեղարուես-
 տասէրներու թատրոնին սրահը լե-
 ցընելու : Եւ ժամը ինը քառորդ ան-
 ցած, վարագոյրը քաշուելով, բեմին
 վրայ ի տես կը բերէ ամենէն աղուոր
 անակնկալը, կաւոյնով, կանաչով,
 անհրաժեշտ հագուած երգող խումբեր :
 Կարմիր, կենդանութեան, գործու-
 նէութեան նշան, կանաչ ու ճերմակ
 յոյսի ու հաւատքի խորհրդապատկեր :
 Երեւակայութիւններու գրգռիչ այդ
 երեւոյթներուն մէջ՝ Տալուարիկի
 երգն է որ մեզ կը թոցնէ Սասունի
 սարերուն ու քարերուն մէջ :
 Ամբողջ շորս ժամու տեւողութեան
 մէջ, բոլոր հանդիսականները գիտես
 թէ ասարբեր աշխարհի մարդիկ, կը
 հետեւին երգերուն, ջութակի, դաշ-

նակի, խորին ու երկի դած լու-
 թեամբ, որոտագին ծափերով ու
 զղորդներով : Կունօ, Վէրտի, հուն-
 գարական ջութակի ու ուրիշներ, ի-
 րենց նուագումներով, զրգիւններով,
 թրթիւներով, արուեստի բարձրու-
 թեամբ ու զէմքերու պայծառ ցոլա-
 ցումներով հայկական նուագահան-
 դէսին անկրկնները կը շինէին կար-
 ծես, հետեւէն մասնակցելով մեր ա-
 մէնէն պաշտելի բանաստեղծներու
 հառաչանքին ու հեծեծանքին, Ալի-
 շանի, Նար-Պէյի, Բամար-Գաթիկայի
 ու Պէշիկթաշիկանի :

Այդ ազգային գեղարուեստի երե-
 կոյթը մեզի բնաւ չպիտի մոռցնէ թէ
 նուագահանդէսը, ազգային գեղար-
 ուեստի սկզբնաւորութիւնը, ինքը-
 բաւ պուլկար հողին վրայ . չպիտի
 մոռնանք գաղափարին գեղեցկու-
 թիւնը, երգերուն հեղինակները,
 հոգեկան յափշտակութեան ժամերը :
 Շնորհաւորելով մասնախումբին
 Ազն. Տիկինները, կը շնորհաւորենք
 Պ. Գ. Մէլքոնեան, որ բեմին վրայ
 իր թեւերուն տակ ամփոփուած ունէր
 ազգ. գեղարուեստի երեկոյթին յա-
 ջողութիւնը : Մենք հանրապէս մէջ
 շնորհաւորելի են Օր. Վերդինէ Ջալն
 տար ո՛վ ծովակի մէջ, Օր. Իսկուհի
 Ձվեռն անցաւի մէջ, ու մասնաւոր
 յիշատակութեան արժանի իր ձայնին
 թրթիւներովը, յաջող ու յափշտա-
 կող նուագումներով ու բարձրացում-
 ներովը . Օր. Վերթինի նոյնպէս : Իսկ
 արտասանութեան մէջ, հասկցող ու
 հասկցնող արտասանութեան մէջ՝ Օր.
 Պալմեան, ու ամէնէն հրաշալին՝ Օր.
 Քնար Հայ որդուհին ոտանաւորին
 մէջ :

Առանձին տեղ մը ունեցաւ երե-
 կոյթին մէջ : Թատրոնին ամայու-
 թեանը մէջ անկրկնէ մը դուրս ելաւ
 հայ որդուհին, պատաստուն հագ-
 ուած, սփռոյն, մահաախպ, արհա-
 ւիրքներով շրջապատուած : Ինք
 պատկերացումն էր բոլոր հայ որդու-
 թեան, որ իսլամի ֆանատիկ ու բար-
 բարոս կատաղութեանը զոհ, իր աշ-
 քին առջեւ տեսաւ սուր, տապար,
 հրացան, դաշոյն, կրակ, ամէնը
 դաշնակից հայ կեանքերու դէմ, եւ
 քանի մը ժամէն՝ հայ աղան ու աղ-
 ջիկը իրենք զիրենք որը գտան ի-
 րենց սիրելիներուն գիտակներուն մէջ
 ու իրենց անակներուն քանդումին
 տակ : Օր. Քնար, իր բերանն ու-
 նեցած ոտանաւորին մէջ դրած էր
 սրտի մը բոլոր յււղումները, կսկիծ-
 ները, չարչարանքները, գողգողա-
 ցումները, սարսուռները, ու մեզ կը
 քաշէ կը տանի իր քծքծակալութեան
 ծուկներուն, իր ձայնի պատա-
 ռումներուն ետեւէն . տպաւորութիւն
 տպաւորութիւն, կսկիծէ կսկիծ կը
 հետեւինք իրեն : Եւ սակայն այդ
 որբը, այսօր մուրացկանի մը պէս
 կարօտ օգնութեան, վաղուան Հայու-
 թիւնն է, ու հեղինակին՝ շատ փա-
 աւոր վերջաբանովը՝ այսօրուան որ-
 բը՝ վաղուան Հայաստանն է :

Ու որբը կը սարդի բեմին անկիւն-
 ներէն ներս : Հանդիսականներս ձայ-
 նով, զղորդներով ի տես կը գոչենք
 որբը, որբին հեղինակը : Վարագոյրը
 կը յամառի, չեբերար պատնէշի մը
 պէս մեր անհամբերութեանը առջեւ :
 Եւ սակայն որբը կուզենք, հեղի-
 նակը ի տես կը պոռանք : Ու վեր-
 ջապէս վարագոյրը կը բացուի, այն-
 տեղ է որբը, նոյն սարսուռ ու խոռ-
 վիչ էակը : Հեղինակը չկար որբին
 քով :

Տալուարիկը նորէն կը գտայ, Հայ
 մեռնիկը միաձայն կրկնել կը խնդ-
 րուի : Ու յետոյ կը մեկնինք այլա-
 զան տպաւորութիւններու տակ,

խառնուած գեղարուեստի հոյակապ
 զէմքերով ու սիրելի բանաստեղծնե-
 րու յիշատակներով :

ՇԱՒԱՍՊ

ԳԱՂԹԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԱԿԸ

—)·(—

Ձի գիտէր տրտիլ, զուարթ, կը խըն-
 դայ,
 Կասակներ կրե՛կ Արթին, սրաւիտ .
 եւ վայրկեանի ալ, շուրջ եւ անժը-
 պիտ,
 Ձեզ իր ապրանքին գովեսքը կրասայ :

Լուցիկի, սիկարի քուղոք ունի աղ-
 տոյ,
 Տասը պահարան կրոսայ Տասնցի,
 Գուրջայ կը ծախէ, քոյի գունաւոր .
 Ժիր ու կրակոս է, կրկնակի բոցի :

Եւ կարծես մոզի ձեռքով մը ու-
 ժեղ,
 Ապրանքը փոխի իր գոյնն ու որակ,
 Այ՜ ձեզ չի բերէր տուր, քոյի պը-
 րակ,

Այլ հաւեղ ու քարս ուտեղի՜ բոկեղ :
 Բայց ուսկից կուգայ այն ձայնը
 խորունկ,
 Որ միշտ կը կրկնէ . «Շարժու՛ւն» «Ի-
 րաւունք» .

Ո՛հ, Առջն «կալոցն» է, զաւա՛կ սի-
 րաւուն,
 Ձի նրբե՛ք դադար չիտէ օրն ի բուն :
 Թո՛ղ երկար ապրի այդ ժիրն անձ-
 նաւաց,

Որ քեկն է այժմե՛կ իր հե՛ք ծըն-
 դաց,
 Եւ որ հագուստին ճակը աննոռնի,
 Աշխարհի չափ շայն հոգի մը ունի :

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԽԻՐ

ՓԱԽՍԱԿԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

—)·(—

Կնոջական աղիողորմ ճիւղեր, խառ-
 նուած բէվովէրի պայթիւններու եւ
 տեսակ մը աղմուկի որ կը նմանէր
 շնային վոնմակի մը խուլ վլվլութիւն,
 ցոյց կուտային թէ վայրենիներու
 խուժան մը հոն վերը արդէն սկը-
 սած էր ծրագրուած նախճիւրներուն
 գործադրութեանը : Անհնարին է
 նկարագրել մեր սարսափը : Ճիւղ մը
 հանելու անկարող, պատուհաննե-
 րուն առջեւ գաղտագողի պրկուած,
 արդէն իսկ մեր աչքերուն առջեւ կը
 տեսնէինք արեան փրփուրներ :

Բայց, արհաւիրքի առաջին մտա-
 մոլորումը անցնելէ ետք, ամէն մարդ
 մէկ բան միայն խորհեցաւ . կեանքը
 փրկել :
 Եւ իրարու ականջի փոփոսցիւք,
 «վար իջնանք պահուրտինք» : Սո-
 ղոսկելով սահեցանք տան ստորին
 յարկը, լուռ ու մուռ, մանաւանդ
 մենէ անոնք որ չէին հաւատար ջար-
 դի եւ կողպուտի հաւանականու-
 թեանը : Նկուղը, ուր պիտի պահ-
 ուրէինք լուսանցոյց մը ունէր փո-
 ղոցին վրայ, ուսկից անցնողներուն
 ոտնաձայնը կը լսուէր :

Այն պահուն երբ առաջին յարկն
 իջած էինք, բազմութիւն մը անցաւ
 փողոցէն . կամացուկ մը պատուհանին
 մօտեցայ . օ՛, սարսափելի բան . առ
 նուազն երկու երեք հարկեր քերտ,
 լալ, փաթթոցաւոր խլամ՝ գիտուած
 երկար հաստ փայտերով, կանցնէին
 ջրվէժի ուժգնութեամբ առանց ձայն
 ձիւն հանելու : Միեւնոյն աստի, հե-

տուն, լուսնի լուսին մէջ տեսայ փո-
 ճրը գուժարտակ մը ձիւտոր զին-
 ւորներու . որոնք հրացաններն ու-
 սերնուն վրայ հանգարտօրէն կեր-
 թային : Յոյս մը ծնաւ սրտիս մէջ .
 պիտի պաշտպանուէինք ուրեմն : Պա-
 րապ յոյս : Այդ զինուորները ջար-
 դին վրայ հսկելու պաշտօնը ստանձ-
 նած էին :

Վերջապէս նկուղ իջանք, ընդ ա-
 մէնս տասնեւհինգ հոգի պտուաւ,
 կին, աղջիկ, երիտասարդ, Մանկի-
 կը արդէն կատարեալ անգորրու-
 թեամբ կը քնանար մօրը կուրծքին
 վրայ հանգչած, երջանկութեան
 միակ շեշտը դնելով մեր հիւժող անձ-
 կանքին վրայ : Նկուղին դուռը կը
 բացուէր բակի մը առջեւ, ուսկից
 տան պարտէզը կելուէր : Խուժանը
 առաջին յարձակումով պիտի տեսնար
 ուրեմն մեր թագստոցը : Բայց ուրիշ
 ապաստարան չուսէինք . հոն մտանք
 ու մակաղեցանք ինչպէս ոչխարները
 սպանդանոցին մէջ : Հետեւինս առած
 լամպարը մարեցինք, ու սպասեցինք
 անձայն անշուղտ, սրտատրոփ, ա-
 կանջինս սրած դուրսը ելլալիք աղ-
 մուկներուն : Այդ նկուղէն այլ եւս
 չէինք կրնար լսել գեղին բարձուն-
 քէն եկած աղաղակները : Ուստի պահ
 մը կարծեցինք որ ամէն բան հան-
 դարտած էր, ու մէկ ժամուան մա-
 հացու սպասումէ ետք, կամ հետա-
 քըքրութենէ մղուած կամ օգ առնե-
 լու պէտքէն, վասն զի այդ ստորերկ-
 րեայ նկուղը տասնեւհինգ հոգիի
 շնչառութեան չէր բաւեր, մէկ քա-
 նիններ համարձակեցանք անշուղտ
 դուրս սարդիլ եւ տան վերի յարկն
 ելլալ :

Իրօք, ճիշերը զագրած էին . լու-
 սինը կը շարունակէր իր սփոյն ցոլ-
 քերը թափել ամբողջ զժառանգ գեղին
 վրայ, սրուն կործանումն այնքան
 մօտալուտ էր : Տիրող խաղաղութիւնը
 այնքան անստուեր իր քիչ մնաց
 խարուէինք թէ ամէն վասնի վեր-
 ջացած է : Թաղին հայ պահապանը
 դիմացի փողոցին մէջ իր ճուղանովը
 ժամը 3 կը գարնէր, բնաւ չանսալով
 առջի իրիկուրէն մեր իրեն ըրած
 պատուէրին թէ այն գիշեր չպատի :
 Մարդ-գայլերու ոռնացող ջուլի մը
 հայտնաբերեց ու լուսանքներ ար-
 ձակելով հայերուն դէմ, վազնիվազը
 անցաւ յանկարծ փողոցէն ու քիչ
 յետոյ լսեցինք դառն ու սրտաճմիրիկ
 աղաղակները պահապանին զոր կ'ըս-
 պանէին : Խեղճ մարդը իր պաշտօնին
 պարտականութեանը զոհ գացած էր :

Մէկէն ի մէկ համատարած պրոչը-
 տուք մը սկսաւ ամէն կողմէ : Շուն-
 չերնիս նկուղը առինք սարսափա-
 հար : Հոն, մէկէնիս բէվովէրը բըռ-
 նած, ուրիշ մը դաշոյնը, երրորդ մը
 հաստ փայտ մը, սպասեցինք մեծ ա-
 ղէտին, լամպարը մարած, մեր էու-
 թիւնը կեղբոնացուցած մեր լողու-
 թեան մէջ : Գերեզմանի մը պէս լուռ
 էր հիմա նկուղը, անանկ որ դուր-
 սէն անհնարին էր կոտակել թէ հոն
 տասնեւհինգ էակներ ամէն վայրկեան
 կպսպէին չարաչար մտթուելու .
 ինծի մտատանջութիւն տուողը ման-
 կիկն էր միայն որուն մէկ ձիւրը կը
 բաւէր ամէնքս ալ մասնելու խու-
 ժանին ձեռքը : Սակայն նախախա-
 մական քամահանքով մը սիրուն
 մարդուկը կը ննջէր մօրը ստիւքին
 կպցուցած իր շուրթերը, որոնք շա-
 րունակ կաթ կը ծծէին : Մեղմիւ կը
 խնդրէինք մօրմէն որ ամէն ճիւղ թա-
 փէ մանուկին ձայն հանել չտարու :
 Այդ անմոռանալի գիշերը, մեր մէջ
 ամէնէն աւելի այդ հեք մայրը տա-
 ւապեցաւ :

Գիշ քիչ, փողոցին մէջ երթեա-

կուրծինը կողմնորոշվելու մերթ կնոջ լացող ազդակ մը, օգնութիւն պահանջող մարդու մը վազքը, ընդհատուած՝ քիւրտի մը սպաննազին հայհոյանքներով, հետզհետէ սոսկումի նորանոր սրկումներ կը պատճառէին մեզ:

Յետոյ, նորէն ամէն բան լռեց. սարսափէ եւ օդի ճնշումէ կէս թըմբած էինք գրեթէ, երբ ամէնքս մէկէն վեր ցատկեցինք որոտագին աղմուկէ մը որ փողոցին մէջ կը պոռթկար: Այս անգամ գերակատարները սարսեր էին. մեր խորայէլեան սիրելի ծնունդներն էին որ անակնկալ կերպով երեսան կելլային՝ կարծես գարաւոր վրէժի ծարաւ մը յագեցնելու: Ի սկզբան չհասկցանք թէ այդ «մոռոն»ները ինչ կը փնտռէին մեր փողոցին մէջ. իրենց հանած ժխտորին վրայ անհնարին է գողափար մը տալ: Երեսակայել հինգ հարիւրի մօտ հրեաներ որոնց իւրաքանչիւրը տարբեր պոռչաւոր մը կարճէ: Սուժանը եկեղեցիին վրայ յարձակեցաւ, եւ սկսաւ անաւոր հարուածներով թընդացնել Ս. Ստեփաննոսի հաստակուռ գուռը, որ հսկայի պէս զիմադրեց հրէական այդ գարշելի ու վատ բախու՛ն երուն: Ամբողջ կէս ժամ մուկիւն խուժանը մաքառեցաւ այդ դէրան հետ, որ անդրդուելի մնաց՝ հայ խորանը արիւսպէս պաշտպանելով խորայէլեական պղծութեան դէմ:

Ան ատեն սոսկալի բան մը եղաւ. ամբողջ, սրտմտած, քիւսալից, անգուժ, ինկաւ տուններուն վրայ: Գահալէժ կործանում մը սկսած էր մենէ քիչ հետո. գոննր կը խորտակուէին, պատուհաններ կը ճայթէին, կահ կարասիներ փողոց կը նետուէին ջարդուփշուր, գետինը կը գոռար, որոտում մը կար կարծես մեր զլիւնուն վրայ, երկրաշարժի ցնցումի պէս բան մը որ կը դողդողացնէր մեզ:

Տուները մէկ թափով կը կողոպտուէին. քիչ քիչ կարգը մեզի կուգար. աղմուկը, հետզհետէ անկազարկ, կը մօտենար ամէնակուլ ճիւղի մը սրբնթացութեամբ: Եունչ չէի աուննր. կարծես դողոցած էի ապրելէ. միայն կուրծքիս վրայ կզգայի սրտի բարխումներ լախտի հարուածներու ուժգնութեամբ:

Յանկարծ բան մը փառ գլխնուս վերեւ, թնդանօթի պայթման պէս խլացուցիչ: Ամբողջ տունը զզրոցայ հինգ հարիւր կատաղիներու միահաղոյն յարձակման տակ:

Աչքերս գոցեցի...
Կորսուած էինք...

[Շարունակելի]

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

—(—)

ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Թան»ի Կ. Պոլսոյ թղթակիցը փետր. 10 թուականով գրած մէկ նամակին մէջ մանրամասն կը խօսի Երեւանի իշխանի թեկնածութեան մասին ինչպէս նաև Գերմանիոյ և Ռուսիոյ վերաբերման մասին այս խնդրին նկատմամբ: Կըսէ թէ Գերմանիոյ բռնած չափաւոր ընթացքին պատճառն այն է՝ մասնաւանդ որ Պերլինի մէջ ըմբռնուած է թէ ինքնուրոյն գործելու փորձերը պիտի բախին հզօր ընդդիմութեան, գուցէ նոյն իսկ վնասուած

շահերու դաշնակցութեան մը: Ռուսի եւրոպական համերաշխութեան համակերպելու և քանի մը զոհողութիւններու պէտքն զգացուած է Գերմանիոյ կողմէ: Միւս կողմէ, Չարին կառավարութիւնը Երեւանի իշխանի թեկնածութիւնը առաջ քշած է անհրաժեշտ երաշխիքներ ձեռք բերելէ ետք: Ապահով է եղեր որ Սուլթանի մօտ չպիտի տեսնէր Գերման գեսպանի մը յայտնի թշնամութիւնը այս խնդրին նուկատմամբ: Եւ արդարեւ Պ. Մարչալ փութացած է գիտել տալ իր ընթացքին չէզոքութիւնը և բընաւ փորձ չէ փորձած ուստական ծրագրին յաջողութիւնը կասեցնելու: Այս պայմաններուն մէջ, ինչն ու ուրեմն Երեւանի թեկնածութիւնը չյաջողեցաւ առջի օրէն: Վասն զի Սուլթանը անյուսալի ընդդիմութիւն մը ցոյց տուաւ: Չանալան միջոցներ ցոյց տրուած էին իրեն՝ Երեւանի պահանջներն յարմարցնելու իր խաղիֆայի արժանապատուութեան ու ժողովրդականութեան: Մէկ քանի օր մտածեց: Բայց յետոյ իր առջի յամառութեան դարձաւ: Ինքզինքը զօրաւոր կզգայ զինուորական թուրքի կարծիքով որ դեռ կը հսկէ Թեասլոյ յաջթանակին վրայ, ինչպէս նաև եւրոպական համերաշխ գործակցութեան չզոյրութեամբը:

Ռուսիոյ առաջարկը շատ կանուխ վրայ հասած ըլլալով հարկ եղաւ թողուլ որ քիչ մը յապաղիան: Ի որէն ձեռք պիտի առնուի, երբ Թեասլա այլ եւս փոխանակութեան գրամ մը չըլլայ Սուլթանին ձեռքին մէջ և Ռուստիան ալ զինք ազատէ այն երկիւղէն թէ հեղինակութեան եղած զիջում մը կընայ իր հակահարուածն ունենալ պալքանեան փոքր տէրութիւններուն մէջ, պահանջումներ գրգռելով:

«Բայց գալով Թուրքիոյ, հորիզոնը չի սահմանափակուիր կրէտական գործերու յամեցող կարգադրութեամբ: Եթէ նոր միջադէպեր չիզան չխառնակին համաձայնութիւն մը որ ուրիշ նուիրագործում չունի եթէ ոչ գաղափարներու և խօսքերու փոխանակութիւն մը, Երեւանի թեկնածութիւնը Կրէտէի կառավարչութեան համար, գործադրութեան սկիզբը պիտի ըլլայ աւելի ընդարձակ ծրագրի մը որ սահմանուած է տեւական անգործութիւն տալ Արեւելքի: Այս մասին կը դիմեմ տեղեկութիւններու որոնք թափանցած են մինչև Սուլթանի մօտ ուր շատ յուզում պատճառած են իրենց անուրանալի ծանրութեամբը: Կրէտական խնդիրը կարգադրուելուն պէս, պիտի լսենք ընդհանուր բարենորոգումներու և աւելի մասնաւորապէս ասիական թուրքիոյ նահանգներուն մէջ բարեկարգութեան հաստատման

խօսքը: Հայկական խնդիրը բաց մնացած է և անհնարին է ծածկել որ կեանքը կեցած է Անաստուրի մէջ ուր դեռ կը տիրէ սարսափը...»

Բէրիփօլիաի (Կրէտէ) մէջ, ֆրանսացի զինուորի մը դէմ թուրք զինուորներ անպատեհ ընթացք մը բռնած ըլլալով, և ժամանակէ մը ի վեր ուրիշ դանդաղներ ալ տեղի ունեցած ըլլալով Սուլթանի բարեկիրթ զինուորներուն դէմ, հաւանական է որ թուրք զօրքերը դուրս հանուին անկից:

«Թայմզ»ի բարիղեան թըղթակցին անղեկութիւններուն համեմատ, Ռուսիա, Ֆրանսա և Անգլիա, հաւանութեամբ Գերմանիոյ, կը շարունակեն պնդել Երեւանի թեկնածութեան վրայ Կրէտէի կառավարչութեան համար. Երեւան, ինքնօրինութեան ծրագրին համաձայն, պիտի ստանայ Կրէտէի Գերագոյն իշխան տիտղոսը. ինք յատկապէս պիտի հրաժարի Ռուստոտանի գահուն վրայ ունեցած իրաւունքներէն, որով կը ջրուի այն ենթագրութիւնը թէ Երեւանի ընտրութեամբ Կրէտէ Յունաստանի միացած կըլլայ: Ռուսիան է այս առաջարկն ընողը, որ ընդունուել է թէ իշխանին և թէ Յունաստանի արքայական գերագատանին կողմէ: Կը կարծուի թէ այս պայմաններուն մէջ, Գուռը այլ եւս չպիտի մերժէ և թէ ընդդիմացող տէրութիւններն ալ պիտի տան իրենց հաւանութիւնը:

«Թայմզ» կըսէ թէ Աթէնքի գեսպանը ծանուցեր է հեղինակութեան որ Չարին կառավարութիւնը որոշած է իր հաշուոյն երաշխաւորել պատեհազմական սուղանքին փոխանութիւնը:

Որչափ ծամծմեցին սա փոխառութեան անվերջանալի խընդիրը. կարծես պարտութեան ճնշումը իրեն չի բաւեր, դիւանագիտութիւնը այս լոկ դրամական խնդրին մէջ իսկ կը շարչրկէ խեղճ Յունաստանը:

Սուլթանը երեք զօրավարէ կազմուած յանձնաժողով մը կարգեր է քննութիւն կատարելու համար Գոսովաի նահանգին այն դէպքերուն մասին զորս կը յիշէ պուլկարական վերջին ծանուցագիրը: Յանձնաժողովին անդամները պիտի կատարեն արդէն որուած հրամանները, այսինքն պիտի հրաժարեցնեն յանցաւոր գայմազամները որոնք բանտարկեալներ չարչրկած էին, և ազատ պիտի արձակեն բանտարկուածները, ի բաց առեալ 10 հոգի, որոնք թեթեւ պատիժներու պիտի ենթարկուին: Կըսուի որ եթէ պուլկար կառավարութիւնը չստանար այս զոհացումը, պիտի խնդրէ եղեր որ միջազգային քննիչ յանձնախումբ մը կազ-

մուր: Զրոյց կայ նաև թէ Սուլթանը փափագեր է ուսնել Ֆէրատինանա իշխանը և թէ այս տեսակցութիւնը որոշուեր է:

—Փետր. 7ին Սուլթանէն ստացած մէկ ունկնդրութեանէն ետք, Պոլսոյ գերմանական գեսպան Պ. Մարչալ ընդունել է ականակուռ Օսմանիյէ պատուանշանը:

—Օռուդի մէջ կը կարգանք. «Սուլթանին հրամանովը, «Օռուդի թուրքիա մուտքն արդիւրեցաւ փետր. 12էն: Ասիկա պատու մըն է որուն իրաւունք ունէինք և որ կուշանար դալ: Երբ ժէզուիթներն ու լուսարարները որք կուսնան Զօլաի դէմ, կը ձգէին լռիկ որ Հայաստանի քրիստոնեաները կոտորուին, մենք ձայն բարձրացուցինք յանուն մարգասիրութեան: Այսօր, նորէն յանուն մարգասիրութեան, մատնանիչ կընենք միլիթարիզմի անիրաւութիւնները, արգարութիւնը խեղդող ուժին ոճիրները: Սուլթանը՝ «Օռուդի մուտքը թուրքիոյ մէջ արգիլելու պատիւը մեզ պարտաւոր էր ընել: Իր Հանթիոն շնորհակալ պիտի ըլլայ իրեն:

—«Էնթրանսիտան»ի խմբագրապետ Պ. Ռոշֆոռ որ դատական վճռով մը բանտարկութեան դատապարտուած էր, անցեալ օր կերթայ դատարան յայտարարելու թէ ինքզինքը կը յանձնէ: Հիմա ծակն է Պ. Ռոշֆոռ: Ահա թէ ինչպէս Ֆրանսայի մէջ մարդ ժողովրդական կըլլայ:

ԱԶԳԱՅԻՆ

—X—

Հ Ա Ն Դ Է Ս

Հինգշաբթի օր, եկեղեցիի աւարտումէն ետքը, վարդանանց անմահ սօսին աթիւ փոքրիկ հանգէս մը տեղի ունեցաւ տեղուոյ եկեղեցիի բակին մէջ:

Մեր պատմութեան այս մեծ դէմքերուն ինկալի յիշատակին նուիրուած ատենաբանութիւններ եղան նորակերպ զպրոցին սանդուխտի գըլխէն:

Հանգէսին ազգասիրական հանգամանքին բարեգործութիւնն ալ խառնելու նպատակով, ատենաբաններէն մէկուն համար պնակ պտըտցուցին ունկնդիրներուն մէջ, և գոյացած ողորմութիւնը ազգին այդ խեղճ վաստակաւորին... ձեռքը գրին:

—Կիմանանք թէ Աղքատասխամը ակամայ դադրեցուցեր է իր գործառնութիւնները: Ներկայացող աղքատները կը ճամբուին:

—Հինգշաբթի գիշեր տեղի ունեցաւ վարդան Մամիկոնեանի թատերախաղին ներկայացումը: Սրանը կը յորդէր: Սահայն, շիտակն բսելու համար, խաղը անյաջող յօրինուած մըն էր և չունէր ունէ թատերական արժանիք. ասով հանդերձ դերասանները լաւ կատարեցին իրենց գերբը: Բաւական կըրիկ հասոյթ մը գոյացած ըլլալու է ինպատ վառնաի ազգային վարժարաններուն:

—(—)

ԲՕԼԻԹԻՊԱ

ԲՈՒՄԱ ԲՕԼԻԹԻՊԱՍԸ

«Բէթրա. Վէտոմոթի» կազմ- թարնտա աթիտէքի եազմը

Էճնէպի կազմթալարնտա Բուսիանըն Կիրիտ իչիւն Բրէնս Եօրկիտուն նամղէտլիկինի (Թեկ- նաժու.թիւն) թէքլիֆ իթմէք- տէն կէրի տուրմաունա տայիր հաժաաիսէր տէվամ իթմէքտէ տիր:

«Նօռ» րէսմի կազմթասը պու հաժաաիսի թէքլիպ իտիպ «Բու- սիանըն» Եօրկիտո մէսէլէսինտէ հիչ պիր նէֆսի էնթէրէսօսը եօզ տըր. վէ եալընը սուլհ (խաղա- ղու.թիւն), պախուսու շարգի էվ- ըրօնըն սուլհ կէօզ էօնիւնէա- լըր քի եալընը պու նամղէա- լիք վասթթասըլա օլապիլիք, քէնտի թէքլիֆինտէ սապիթ գա- լաճագ վէ հէր հալտէ մուվաֆ- ֆագ օլաճագ տըր. մուվաֆֆագ օլաճագըն անտէ րուվարըն վէ պուլկարըրըն իսթիգլալիլէթի (անկախութիւն) իչին եարտըր- նը եէնիտէն իճրա իտէր: Պա խուսու քի պու մէսէլէտէ Բու- սիա եալընը գալմամըլ տըր, քէնտի միւթթէֆիգի (գաշնա- կից) Ֆրանսատան մատա Ինկիլ- թէրա վէ իթալիա քէնտիսինէ եարտըմ իտիյօրլար:

ԵՈՒՆԱՆԻԹԱՆ

Քրալ Եօրկիտո՝ Չարա վէ Ին- կիլթէրա գրալիցասընա՝ թաղ- մինաթը հարպիլիլիսին (պատե- րազմական տուգանք) թէտիլիսի- նէ քէֆալթ թէրտիքլէրի իչին, թէլէքքիւր պէյան իտէն մէք- թուպլար եազմըլ տըր: Եունան գրալը 5 միլիոնըգ եէնի պիր իսթիգրազ իչին տախի Բուսիա- նըն եարտըմըն իսթէյօր:

Եունանիսթանըն 165 միլիոն ֆրանգա լուղուը օլուպ 100ի պիր վէ 65ի այրըճա գապուլ ի- տէճէք վէ պիրինճի մէպալըր թիւրք հիւքիմէթիլիսինէ թէսլիմ իտուպ տիկէրի ուֆագ պօրճլա- րընա վէ քօնթրօլ քօմիսիոնընըն թալէպլէրինէ վէրէճէք տիր:

ԲՐԷՆՍԷՍ ԲԼԷՄԱՆԹԻՆ

Բրէնսէս Բլէմանթինին հաս- թալըրընըն կիւն կիւնէ ալըրլան- մասընը թէէսիւֆլէ պէյան իտէ- ըրէլ:

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

Արքեպիսկոպոս տիւր տը Առ- կայլ ինկիլիլ Երէցի իլէ պէրա- պէր կէլէն շարթ կիւնիւ Ազգա- յին Պատրիարքարանա կիտէրէք եարըմ սահաթ գատար Օրման- եան իլէ գօնուշմուշ վէ սոնրա պիր վարդապետ իլէ պէրապէր Մայր Եկեղեցիէ էնիպ, Մայր Տաճարըն էօնիւնտէ տիլզ չէօքէ- րէք տուվա իթմիչ վէ պու մի- նասիպէթլէ Պէզճեան Արթին ա-

Печат. Войничковъ Варна.

միրանըն վէ Ներսէս Պատրիար- քըն գերեզմանլարընա զիյարէթ իթմիչ տիր:

ՊԱԼԵՍՏԻՆ

Պալըքէսէրտէ շիտէթլի զէլզէ- լէլէր սէպէպի իլէ ֆուգարալըգ ուճ տէրէճէյէ վարմըլ օլաճըրն- տան օրանըն տեղապահը եար- տըմ իսթէմէք իչիւն Պատրիար- քա րարօրգօլար եազմըլ տըր:

Վ Ա Ն

Վանտա եէնի քարըլըքուր զուհուր իթաիկի իչիտիլիյօր: Թիւրք կազմթալարը պու հա- պէրլէրի թէքլիպ (հերքիլ) իթ- մէքտէ տիրլէր:

— Անտաօլտան կէլէն հապէր- լէր, պու սէնէ օրանընըն գըլընը չօգ շիտտէթլի նագլ իտիյօրլար:

— Վանտան Պատրիարքարանա եալըլալըրնա կէօրէ Խարակոնիս վէ Առճակ նամ մուհիմ քէօյլէր- տէքի ֆէհալի քաթիլիկ մէզհէ- պիլի գապուլ իթմէյէ մէյլ կէօս- թէրիյօր: Քէչա, Մօկաց, Կիտ- րիս վէ սայիր գազալարտան կէ- լէն հապէրլէրէ կէօրէ կրօնափո- խութիւն օ թարաֆլարտա չօգ իլէրի կիթմէքտէ տիր:

— Շէհրը մէզօրիւրտէն Պատ- րիարքարանա չօգ սուլիլիլի հա- պէրլէր կէլմէքտէ տիր: Փուգա- րէլիք օ տէրէճէ շիտտէթլէնմիչ տիր քի Վանտա վէ Այգեաստան- տա կիւնտէ օն քիչի էօլիւր վէ տօնար:

ԻՆԿԻԼԹԻՐԱ

Պիրինճի տէֆա օլարագ, 1897 տէ ժէնէրալ Հալլօք.Ալան, Ին- կիլթէրա օրոտուընըն ազ օլաճ- ղընը իսպաթ իտէրէք պու պապ- տէ եէնի թէրթիլիլէր էլէ ալմագ լիզուլմընը կէօսթէրմիչ իտի: Նիմտի տախի Մ. Արնոլա Փօս- թըր, «Թայմը» կազմթասընտա նէչը օլընան նութգլարը իլէ, Մ. Հալլօքըն տէտիքլէրինի թասիլի իտէյօր: Մ. Փօսթըրըն արզուըր շու տըր քի ինկիլթէ- րատան տըլարը իչլէյէն հէր պիր սաքէր պէօլիլիլիսին միւ- սավիսի Ինկիլթէրատա տախի պուլունմալըալը:

Օրոտուլար մէսէլէսի պու արա- լըգ Ինկիլթէրայը էն զիյատէ մէչըղլ իտէն մէսէլէլէրտէն պի- րի տիր:

— Բարլամէնթօ մէճլիլիլէրի տէվամ իթմէքտէ տիր: Օրիօղի- ցիյա բարթիսի լօրա Սալըզպը- րինին թուլթուղըր քօլիթիլիգա- սընը գրիթիլիլի իթմէլէ տէվամ իտիյօր: Մ. Աուլթըն վէ Հէնրի Փաուլըր տէտիլէր քի լօրա Սա- լիզպուրի էն նիհայէթ Հինտիս- տանը էլտէն չըգարմաղա սէպէպ օլաճագ տըր: Քէնտի եանլըլարըն էն պէօյիլէրի, Հինտիսթան թարաֆընտա, գօմշու ուֆագ ճիւնլէրի զապթ իթմէք էֆ- քեարը, Բէչալէր Եօլունտա (Աֆ- զանիտան Եօլու) Ինկիլիլ թապ-

եալարըն սագլամաըր վէ Չիթրալը եանի հուտուտա օլան շիմտիքի մուհարէպէնին սէպէպիլի, գա- թիլէն զապթ իթմէսի տիր: Հին- տիսթան գըսմընըն նազըրը պուլարա ճէվապէն տէմիչ տիր քի Ռուսիանըն իլէրլէմէսինէ գարչը գօմագ իչիւն պու հազըր- լըգլար էլզէմ տիրլէր:

Ն Շ Ա Ն

Սուլթան իմթիպ նշանընըն ալթուն միտալեասընը Սրպիա օրաուսընըն պաշ գօմանտանը գրալ Միլանա վէրմիչ տիր:

Պ Ա Յ Ր Ա Մ

Կէլէն սալը կիւնիւ, Սուլթան, Պայրամ միւնասիպէթի իլէ, պէօյիւք թանթանա իլէ Պէչիք- թաշ ճամիսինէ կիտուպ տուա իթմիչ վէ պատէհու Տօլմա Պաղ- չէ սէրալընա ինուպ, օրատա էլ էօրմէք զիյնէթի իճրա իթմիչ տիր: Էճնէպի տէվլէթլէր արօկ- մանլարը օրատա հազըր պուլու- նուպ, պայրամը թէպրիք իթ- միլիլէր տիր:

ՌՈՒՄԻՆՆ ՎԷ ԱԼՄԱՆԻՆ

Մոսկուտան հապէր վէրիլ- տիկինէ նազարէն, ռուս կազէ- թալարը շիմտիլէ գատար տիւն- եատա կէլէն պէօյիւք վուգուաթ- ար հազգընտա սիւքիլ իտէր- լէր իտի իսէ տէ, շիմտի պա խուսու Ալմանիայա գարչը պէնալէր եալմագտա տըրլար: «Նովոէ Վրէմիա» Չին մէսէլէսին- տէ Ալմանիանըն թուլթուղըր բօ- լիթիգասընը շիտտէթլի լիսան ըլա աշաղը վուրուր: Եէնի մէսէ- լէլէրտէն պահս իտուպ, իչպու կազէթա՝ Բուսիանըն կիւնտէն կիւնէ գուվլէթլէնտիկինի վէ էվրօրա իթթիֆագը (համաճայ- նութիւն) պիր գաշ նօգթալար- տա Բուսիանըն ինթէրօլարընը թէհիլէքէյէ տիւլար իթմէք իս- թէյօր իսէ տէ, Բուսիա քէնտի ինթէրօլարընը միւտաֆաա իթ- մէյէ միւքթէտիր տիր:

ՄԱԼԻԹԱՍՎ ՎԷ ՊՈՒԿԱՐ

Եըլտըլ սէրայըն միւրէվլիճը էֆքեարը (քեբան) օլան Մա- լիմաթ կազմթասըր վէ Սօֆեատա- քի Պուլկար կազմթալարը պէյ- նիտէ կայէթ շիտտէթլի պիր գավկա պաշլամըլ տըր: Իքի թարաֆտան սէրթ լիսան գուլ- լանըմագտա տըր. հէլէ «Մա- լիմաթըն» տէտիքլէրի հիչ գա- լէմէ կէլմէչ: Աղընա կէլէնի գոյ վէրմէքտէ տիր:

Մ. ՏԷԼԻԵԱՆԻՍ

Աթիստաքի թահգիլիլի քօ- միսիօնը Մ. Տէլիեանիսի իսթիլ- թագ իթմէյի գարար վիբուպ՝ ճէլպ կէօնտէրմիչ տիր: Մ. Տէ- լիեանիս թահրիլէն (գրաուր) ճէվապ վէրմէք իչիւն պիր գաշ

կիւն միւտաաաթէ իսթէմիչ: Հարպ զէմանընտա Եունանիսթանըն խա- րիճի միւնասիպէթլէրին նէ օլ- տըգլարը վէ օ սըրատա էվրօրա- նըն նէ՞ էֆքեարտա պուլուտու- ղու վէ Տէլիեանիս էթիլիքէ է- թէրիա իլէ նասըլ տաժրանմագ- տա օլաճըրըն քէնտիսինէ սը- ըրլաճագ ըմըլ:

Պ Օ Ր Ս Ա

Table with 2 columns: Item name and price. Includes items like Վառնա 14 Փէսրուս, ՊՈՒՂՏԱՅ, Վազօն, Արապա, ԱՐԲԱ, Լիպրա, ՄԸՍԸՐ, Վազօն, Արապա, ՖԱՍՈՒԼԵՍ, 100 օգգասը, Ամապա մուամլէսի, Կիւնտէ 2-3 վազօն, 3-5 արապա, 1-2 վազօն, 3-4 արապա.

ՏՊԱՐԱՆ «ՇԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեղուէ այցետոմս, հասցէտոմս, նամա- կագլուխ, հարսանեկան հրաւի- րագիր, մահալղ, ինչպէս նաե պրօչիւռներ: Գինըն յոյժ գիւրամատչելի: Ուրիչ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգու- թեամբ և փութով կը կատար- ուին:

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վանաի մէլ կը վաճառուի Մու- սալա, թահմիլ կէօղիպէօյիլէքանի խանութը, Սասուն սըճարանի ծխա- վաճառին քով և Ապտիւրրանան մղկիթին գէմը հայկական գրատու- նը, Ա. Չարբէնէլիանի քով:

Հ Ա Յ Ե Լ Ի

Ա. Չարբէնէլիանի քով: Սոյն երգիծաբանական հան- գէսը, որ տարիէ մը ի վեր շա- բաթը մէկ անգամ կը հրատա- րակուի Վառնայի մէլ, բաւա- կան հաճելի եղած է իր ընթեր- ցողներուն: Տարեկան բաժանորդագիրն է Պուլկարիոյ համար 10 ֆր. վե- ցամսեան 5 ֆր. արտասահմանի համար տարեկան 12 ֆր. վեցամ- սեան 5 ֆրանք:

ОТГОВОРНИКЪ: X. Тахмисьянъ.